



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745  
E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



**ՀԱՆԳԻՍ**  
**S. ՍՄԲԱՏ ԱՐԲ. ԼԱՓԱՃԵԱՆԻ**



Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Հոգեւորականաց Դասը, Կրօնական ժողովը, Ազգային Վարչութիւնը եւ Ս. Խաչ Մայր Տաճարի ծխական համայնքը սրտի դառն կսկիծով կը գուժեն վախճանումը Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռի երիցագոյն միաբաններէն եւ Թեմիս առաջին թեմակալ Առաջնորդ Տ. Սմբատ Արք. Լափաճեանի, որ շիջեցաւ Շաբաթ, 17 Յուլիսի առաւօտուն, «Արարատ» Տան մէջ, Միշըն Հիլզ:

Լուսահոգի Սրբազանը աւելի քան 40 տարիներու վաստակ ունի մեր Թեմին մէջ: Եղած է երկարամեայ Հովիւ Լոս Անճելըսի Ս. Խաչ եկեղեցւոյ եւ Հոգեւոր Տեսուչ Ս. Խաչ Մայր Տաճարին:

Լուսահոգի Սրբազան Հօր հոգւոյ խաղաղութեան համար, Կիրակի, 18 Յուլիսին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի տնօրինումով, հոգեհանգստեան պաշտօն տեղի ունեցած է Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին եւ Պիքֆայայի Ս. Աստուածածին մատրան մէջ:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազանին կարգադրութեամբ, նոյն օրը, մեր Թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ տեղի ունեցաւ հոգեհանգիստ, աղօթք բարձրացնելով առ Աստուած, որ անոր բարի հոգիին յաւիտեանական հանգիստ պարգեւէ երկնքի արքայութեան մէջ: Առաջնորդ Սրբազանը Օրէնճ Զունթի Ս. Զառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ նախագահեց հոգեհանգստեան արարողութեան:

Վերջին օծման ու թաղման կարգին թուականն ու այլ  
մանրամասնություններ կը հաղորդենք ատենին:  
Լոյս մշտենջենի յոզնաբեկ ածիններուն:  
Յիշատակ արդարոյն օրհնութեամբ եղիցի:

## **IN MEMORIAM ARCHBISHOP SUMBAT LAPAJIAN**

It is with deep sorrow that H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, Prelacy Clergy, Religious and Executive Councils, and the parish community of Holy Cross Cathedral mourn the loss of H.E. Archbishop Sumbat Lapajian, one of the longest serving members of the Catholicosate Brotherhood and the first Prelate of the Western Prelacy, who entered eternal rest on the morning of Saturday, July 17<sup>th</sup>, 2010, at Ararat Home in Mission Hills.

Archbishop Lapajian served within the Prelacy for over four decades as pastor of Holy Cross Church in Los Angeles and Holy Cross Cathedral in Montebello.

By the ordinance of H.H. Catholicos Aram I, on Sunday, July 18<sup>th</sup>, requiem was offered for the soul of the late Archbishop at St. Gregory the Illuminator Mother Cathedral in Antelias, and at St. Mary Chapel in Bikfaya. On the same day and by the ordinance of the Prelate, requiem was also offered in all Prelacy Churches. The Prelate presided over the service at Forty Martyrs Church in Orange County.

Details of the Extreme Unction and Funeral Mass to follow.  
May his memory remain ever blessed.